



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վարչական դատարանի վճիռ  
Նախագահող դատավոր՝ Էդ. Նահապետյան

Վարչական գործ N ՎԴ5/0379/05/11

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

10 դեկտեմբերի 2012 թվական

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը  
(այսուհետ՝ վերաքննիչ դատարան), հետևյալ կազմով՝

*Նախագահող դատավոր՝  
դատավոր  
դատավոր*

**ԳԱԼՈՒՄՏ ՂԱՐԻԲՅԱՆ  
ԱՇՈՏ ԱԲՈՎՅԱՆ  
ԱՐԹՈՒՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

մասնակցությամբ՝

Հասմիկ Առաքելյանի,  
ներկայացուցիչ՝  
Բոքերսու Մուրադյանի,

ՀՀ Շիրակի մարզպետարանի  
ի դեմս ներկայացուցիչ՝  
Գեղամ Բաղդասարյանի,  
Տիգրան Հարությունյանի,

քննելով՝ Հասմիկ Թևանի Առաքելյանի վերաքննիչ բողոքը՝ Հայաստանի  
Հանրապետության վարչական դատարանի 2012 թվականի հուլիսի 25-ի վճռի դեմ, որը  
կայացվել է N ՎԴ5/0379/05/11 վարչական գործով՝ ըստ հայցի Հասմիկ Առաքելյանի ընդդեմ  
ՀՀ Շիրակի մարզպետի՝ պետական մարմնի անգործության հետևանքով խախտված  
իրավունքի վերականգնման պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի ուսումնասիրական նախապատմությունը**

ՀՀ վարչական դատարանը /դատավոր Է. Նահապետյան/ 25.07.2012թ.-ի վճռով հայցը  
մերժել է:

Նշված վճռի դեմ՝ Հասմիկ Թևանի Առաքելյանը բերել է վերաքննիչ բողոք և միջնորդել է  
ագատել վարչական տուրքի վճարումից, քանի որ կենսաթոշակառու է, անվճարունակ է,  
ինչպես նաև առանց գոտու բնակիչ է:

Վերաքննիչ դատարանը 2012 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ միջնորդությունը  
բացարձակապես մերժել է՝ ընդունել է վարույթ և նշանակել քննության:

Բողոքի վերաբերյալ պատասխան չի ներկայացվել:

**Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Բողոքի նախապորապես նշվել է հետևյալը:



Վճիռը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումով:  
Այսպես՝ վճռի 4-րդ էջում ՀՀ վարչական դատարանը /այսուհետև նաև՝ Դատարան/ մատնանշում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը, 4-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը, 5-րդ հոդվածի 2-րդ մասը, 18-րդ հոդվածը, նշում որ այդ հոդվածները երաշխավորում են մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Սակայն գտնում է, որ վերլուծելով դատաքննությանը ձեռք բերված ապացույցները, Դատարանը ուշադրություն չի դարձրել նրա կողմից ներկայացրած Գյումրու քաղաքապետի կողմից շենքի բաշխման որոշումը, նրան մեկ անձի համար տրված օրդերը, անձնագրային բաժանմունքից ներկայացրածը՝ 17(18) ձևից քաղվածքը, ուր հաշվառված է միայն նա, «Գյումրու կենտրոն» համատիրության կողմից տրված տեղեկանքը, և վճռի 5-րդ էջում նշում է միայն մարզպետի ներկայացրած 80-ական թվականներին վերաբերող 17(18) ձևից քաղվածքը, երբ 1986թ. չկար դատարանի վճիռը բնակարանի մեկ սենյակը նրան և նրա ամուսնուն, որպես առանձին ընտանիք հատկացնելու մասին:

Նշել է, որ Դատարանը վկայակոչելով «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը գտել է, որ պետական ֆոնդի բնակարանների մասնավորեցումը կատարվում է այդ բնակարանի բնակիչների կողմից մարզպետին տված դիմումի հիման վրա, այդ բնակարանում բնակտարածության իրավունք ունեցող անձանց համաձայնությամբ: Դատարանը նրա ընտանիքի կազմում է հաշվել ԱՄՆ-ում շուրջ 20 տարի բնակվող՝ ԱՄՆ-ի քաղաքացիներ դարձած անձանց, 2001թ. մահացած անձին՝ Գրիգորին:

Գտնում է, որ խախտվել է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ և 24-րդ հոդվածները, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված բնակարանային իրավունքը՝ 34-րդ հոդվածը:

Վճռում վկայակոչված են ՀՀ կառավարության 22.12.1995թ. թիվ 116 որոշումը՝ «Աղետի գոտում երկրաշարժի պատճառով վթարային դարձած և պետական միջոցների հաշվին ամրացված շենքերի բնակեցման մասին» որոշումը, «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» 30.05.2000թ. ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 21.11.2002թ. «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցներով կառուցված պետական ֆոնդի բաշխման մասին» որոշումը, և այլ օրենքներ ու որոշումներ, որոնք խախտվել են Շիրակի մարզպետի կողմից և դրանք իր վճռով ամրագրել է Դատարանը:

Սույն վճռով խախտվել է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» Եվրոպական կոնվենցիայի (Հռոմ, 1950թ. նոյեմբեր) 6-րդ հոդվածի սկզբունքը և ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջը: Խնդրում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «ամբողջությամբ բեկանել սույն վճիռը և փոխել վարչական դատարանի ակտը՝ կայացնելով օրենքից բխող դատական ակտ»:

### 3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը և Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 117<sup>12</sup>-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար»:

Բողոքաբերը նշել է, որ Դատարանը չի հետազոտել գործի նյութերում առկա Գյումրու քաղաքապետի կողմից շենքի բաշխման որոշումը, նրան մեկ անձի համար տրված օրդերը, անձնագրային բաժանմունքից ներկայացրածը՝ 17(18) ձևից քաղվածքը, ուր հաշվառված է միայն նա, «Գյումրու կենտրոն» համատիրության կողմից տրված տեղեկանքը, և վճռի 5-րդ էջում նշում է միայն մարզպետի ներկայացրած 80-ական թվականներին վերաբերող 17(18) ձևից քաղվածքը, երբ 1986թ. չկար դատարանի վճիռը՝ բնակարանի մեկ սենյակը նրան և նրա ամուսնուն, որպես առանձին ընտանիք հատկացնելու մասին: Գտնում է, որ խախտվել է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ և 24-րդ հոդվածները, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված բնակարանային իրավունքը՝ 34-րդ հոդվածը:



Սույն գործով հայցվորը խնդրել է դատարանին պարտավորեցնել ՀՀ Շիրակի մարզպետին թույլատրել սեփականաշնորհելու Գյումրու քաղաքապետի 2003 թվականի հունվարի 31-ի թիվ 58 որոշմամբ իրեն հատկացված Գյումրի քաղաքի Կ.Դեմիրճյան փողոցի 8ա շենքի թիվ 48 բնակարանի 10.9 քմ բնակմակերեսով մեկ սենյակը՝ ընդհանուր կոմունալ հարմարություններով:

Լեւինականի Մոսկովյան շրջանի ժողդատարանի 1986 թվականի դեկտեմբերի 12-ի օրինական ուժի մեջ մտած վճռով Գրիգոր Գևորգի Առաքելյանի երկու անձից բաղկացած ընտանիքին թույլատրվել է վարձակալան իրավունքով բնակվել Լեւինականի Քուբայիսյան փողոցի նո. 8շենքի նո.48 երեք սենյականոց բնակարանի Ա-2 10.9 քմ բնակմակերեսով սենյակում: Բնակարանի օժանդակ և կոմունալ հարամարությունները կողմերը պետք է օգտագործեն համատեղ /գ.թ. 7/:

Գյումրու քաղաքապետի 2003 թվականի հունվարի 31-ի որոշմամբ Հասմիկ Թևոսի Առաքելյանին նրա անունում, համաձայն Մոսկովյան շրջանի ժողդատարանի 12.12.86թ. վճռի, հատկացվել է Քուբայիսյան փողոցի 8 շենքի թիվ 48 երեք սենյականոց բնակարանի Ա-2 սենյակը՝ 10.9քմ բնակտարածությամբ: Օժանդակ և կոմունալ հարմարությունները պետք է օգտագործեն համատեղ, իսկ մյուս երկու սենյակները հատկացվել է Սիրվարդ Առաքելյանին /4 անձ/, նույնպես նշված է, որ կոմունալ հարմարությունները պետք է օգտագործեն համատեղ /գ.թ. 4/:

Վերը նշված որոշման հիման վրա Հասմիկ Առաքելյանին տրվել է հ. 48 միասնական օրդերը /Բնակարանի օրդերը հանդիսանում է միակ փաստաթուղթը և այն իրավունք է տալիս քաղաքացուն զբաղեցնելու նշված տարածքը:/ Օրդերում հստակ նշվել է 1 սենյակը, 1 անձի համար է, որը հանդիսանում է Հասմիկ Առաքելյանը, հասցեն՝ Կ. Դեմիրճյան /Նախկին Քուբայիսյան փ. 8/, 8Ա շենքի 48 բնակարանը՝ 10.9 բնակելի մակերեսով /գ.թ. 26/:

Համաձայն՝ անձնագրային բանձանմունքից տրված 17(18) ձևի քաղվածքի՝ ք. Գյումրի, Կ. Դեմիրճյան /Նախկին Քուբայիսյան փ. 8/ 8Ա շենքի 48բն. 28.06.2003թ. հաշվառվել է Հասմիկ Առաքելյանը /գ.թ. 8/:

Վերը բերվածից հետևում է, որ տվյալ դեպքում առկա է 12.12.1986թ. օրինական ուժի մեջ մտած վճիռ, որի հիման վրա կայացվել է Գյումրու քաղաքապետի որոշումը, որի հիման վրա էլ տրվել է հ. 48 օրդերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Վերը նշված հոդվածի դրույթների համաձայն, օրինական ուժի մեջ մտած վճիռը պարտադիր է բոլորի համար և այն ենթակա է կատարման:

Տվյալ դեպքում ՀՀ Շիրակի մարզպետարանը Հասմիկ Առաքելյանի 05.09.2011թ. հ. 2090-7B58-E27F դիմումին 09.09.2011թ. հ. 03/4342-11 գրությամբ պատասխանել է, որ. «... Գյումրու քաղաքապետի 31.01.2003թ. թիվ 58 որոշման համաձայն՝ Գյումրի քաղաքի Կ. Դեմիրճյան 8ա շենքի թիվ 48 երեք սենյականոց բնակարանը հատկացվել է Ձեր 5 անձից բաղկացած ընտանիքին»: Այնուհետև վկայակոչել է «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» 30.05.2003թ. ՀՀ օրենքը և նշել է, որ ՀՀ կառավարության 21.11.2002թ. «Աղետի գոտու վերականգման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանների բաշխման և 1999 թվականի հունիսի 10-ի հ. 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» որոշման համաձայն՝ պետական սեփականություն համարվող բնակարանային ֆոնդի բնակարանների մասնավորեցումը կատարվում է տվյալ բնակարանի վարձակալի կողմից համապատասխան մարզպետին ուղարկված հիմնա վրա՝ այդ բնակարանում բնակելի տարածության օգտագործման իրականացման համարձակագրի նախապատասխան անձանց համաձայնության առկայության դեպքում, ուստի վերոհիշյալ անձանց բնակարանի սեփականաշնորհման համար անհրաժեշտ են ընտանիքի անդամների ներկայությունն ու համաձայնությունը (իսկ բացակա անդամների ներկայացվում են համապատասխան լիազորագրեր՝ անկախ տվյալ պահանջարկից, քաղաքացիությունից, մահացած անդամի դեպքում՝ մահվան վկայական):



Այնուհետև նշվել է, որ Հասմիկ Առաքելյանի խնդրանքը նշված բնակարանի միայն մեկ սենյակը սեփականաշնորհելու վերաբերյալ հնարավոր չէ բավարարել /գ.թ. 10/:

Հասմիկ Առաքելյանի մյուս՝ 30.09.2011թ. հ. AF78-D8DB-C5FD դիմումին 06.10.2011թ. հ. 03/4869-11 գրությամբ ՀՀ Շիրակի մարզպետարանը տվել է նույնանման պատասխան ավելացնելով՝ ըստ 14.06.2006թ. անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման հ. 1952546 վկայականի Գյումրի քաղաքի Կ. Դեմիրճյան փողոցի 8ա շենքի 48 երեք սենյականոց բնակարանը համարվում է որպես մեկ միավոր գույք, ուստի այդ բնակարանի միայն մեկ սենյակը առանձին սեփականաշնորհել հնարավոր չէ /գ.թ. 11/:

ՀՀ կառավարության «Աղետի գոտու վերականգման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանների բաշխման և 1999 թվականի հունիսի 10-ի հ. 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է. 1. Սահմանել, որ՝ ա) աղետի գոտու վերականգման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանների բաշխումն իրականացնում են համապատասխան մարզպետները՝ համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հաստատված աղետի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների հերթացուցակների համաձայն՝ դրանցում ընդգրկված քաղաքացիների հերթացուցակում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանության արդյունքներով. բ) աղետի գոտու վերականգման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանները քաղաքացիներին հատկացվում են անհատույց, սեփականության իրավունքով՝ համապատասխան մարզպետի և քաղաքացու միջև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված՝ պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ համապատասխան պայմանագրի հիման վրա:

Վերոգրյալի վերլուծությամբ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ՀՀ Շիրակի մարզպետի պատասխանը հիմնավոր չէ, քանի որ Գյումրու քաղաքապետի 31.01.2003թ. թիվ 58 որոշումը կայացվել է օրինակյալ ուժի մեջ մտած Առևտրային շրջանի մոդուլատայանի 12.12.86թ.վճռի հիման վրա և որոշմամբ հատակ նշվել է, որ Հասմիկ Առաքելյանին իր ամուսնու հետ հատկացնել ք. Գյումրի Կ. Դեմիրճյանի փ. / նախկին Քութայիսյան փողոց/ 8 շենքի թիվ 48 երեք սենյականոց բնակարանի Ա-2 սենյակը՝ 10.9քմ բնակտարածությամբ, իսկ օժանդակ և կոմունալ հարմարությունները օգտագործել համատեղ:

Հարկ է նշել, որ գործի նյութերում առկա մահվան վկայականի համաձայն՝ Գրիգոր Գևորգի Առաքելյանը 30.07.2001թ. մահացել է /գ.թ. 12/:

Հետևաբար, փվյալ դեպքում որևէ մեկի համաձայնությունը հարկավոր չէ, քանի որ հատակ ք. Գյումրի Կ. Դեմիրճյանի փ. / նախկին Քութայիսյան փողոց/ 8 շենքի թիվ 48 երեք սենյականոց բնակարանի Ա-2 սենյակը՝ 10.9քմ բնակտարածությամբ հատկացվել է միայն Հասմիկ Առաքելյանին, որի վերաբերյալ վերջինս խնդրում է գրանցել իր սեփականության իրավունքը:

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման: Հետևաբար տվյալ դեպքում կիրառելի է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված լիազորությունը՝ ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու վարչական դատարանի ակտը՝ կայացնելով նոր դատական ակտ:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առկա փոփոխությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը, հիմնավորված չէ: Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման արդյունավետության և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 117.13-րդ և 117.14-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը:



ՈՐՈՇԵՑ

1. Հասմիկ Թևանի Առաքելյանի բողոքը բավարարել՝ բեկանել N 475/0379/05/11 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2012 թվականի հունիսի 25-ի վճիռը և այն փոփոխել՝

Հասմիկ Առաքելյանի հայցն ընդդեմ ՀՀ Շիրակի մարզպետի՝ պետական մարմնի անգործության հետևանքով խախտված իրավունքի վերականգնման պահանջի մասին բավարարել:

Պարտավորեցնել ՀՀ Շիրակի մարզպետին թույլատրելու կատարել համապատասխան գործողություններ՝ Հասմիկ Թևանի Առաքելյանի անվանք սեփականաշնորհելու Գյումրու քաղաքապետի 2003 թվականի հունվարի 31-ի թիվ 58 որոշմամբ իրեն հատկացված Գյումրի քաղաքի Կ.Դեմիրճյան փողոցի 8ա շենքի թիվ 48 բնակարանի 10.9 քմ բնակմակերեսով մեկ սենյակը՝ ընդհանուր կոմունալ հարմարություններով:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան:


ՆԱԽԱԳԱՅՐՈՂ ԴԱՏԱՎՈՐ



ԴԱՏԱՎՈՐ  
Ա. ԱՐՈՎՅԱՆ



ԴԱՏԱՎՈՐ  
Ա. ԱՆՈՒԵՆԼՅԱՆ



Հայաստանի Հանրապետության վարչական  
սահմանված ժամկետում սույն որոշումը «  
բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:»

դատավարության օրենսգրքով  
2012 թվականի դրությամբ չի

ՆԱԽԱԳԱՅՐՈՂ ԴԱՏԱՎՈՐ

Գ. ՂԱՐԻԲՅԱՆ